

ազգաց երաժշտութիւնը այս ատիւնն զգալի տարբերութիւն չունենալով, շատ կերպիւ կը նմանին միմեանց, ինչպէս և այսօր յարեւելս, ուր առհասարակ ազգ որչափ ալ իրարմ տարբեր՝ այլ էակէս մի և նոյն ձայնի գաւառներով թէմանք մի և նոյն եղանակներն ունին։ Այս պարագային մէջ երաժշտական տիրոջ գոշնակը գլխաւորապէս սոյն ազգային է, որ կամ այս մասին աւելի յառաջագիծութիւն և կամ ինչ և իյն իւրովն ազգեցութիւն մը ունեցեր է միւս ազգաց վերայ, ինչպէս են այսօր յարեւելս Օսմանցիներ, Պարսիկներ, Արաբացիներ և Եւրոպայի մէջ ալ այնպէս է, նախկին հնդկական և հռոմէական դաշնակն է որ տիրած է էսպէս ամեն ազգի մէջ, ինչ և ատեն տոնեն այս մասին փոփոխութիւններ մտած են և ամեն ազգ ալ իրենց մասնաւոր ձայնին ունին իրարմ քիչ շատ տարբեր։

Այն ազգն ալ աշխարհին հին ազգերն մէկն ըլլալով, որչափ ալ միշտ ուրիշ ազգաց հետ յարաբերութեան մէջ և շատ անգամ անոնց ազգեցութեանը կենթակոյց եղած է, այսօր ամենայնիւ եթէ Արաբացիներ և Պարսիկներ նման գլխաւոր ու տարածուն երաժշտութիւն մ'ալ ունեցած չըլլայ, տակաւին պէտք է ունեցած ըլլայ իւր մասնաւոր երաժշտութիւնը, ազգային ձայնը և երաժշտական հնչիւնը, քանի որ Յամանակին ուրոյն կառավարութիւն մը և մինչեւ այժմ ալ ընդունելով, անկախ եկեղեցի մը և ընկերակա՛ն կան կեանք մը ունեցած է և ունի ցարգ։ 'ի հարկէ մեր Գողթման գուստան ալ, այժման պարսկական խճանակն, արաբական հիճաւին և այլոյ նման իւր մասնաւոր եղանակներն ունեն, և իւր քնարներն իրենց գողթման դաշնակն և իւր բանաստեղծ երգիչներն ալ իրենց ազգային ձայնին ու ազգային երաժշտական հնչիւնն ունեն։ Ըստք արգէտը այսօր մի քանի երաժշտական գործիքներու անուններէ և բառերէ և հատկապէս երգերէ զատ, ինչ ունինք 'ի ձեռին, որք թէ և ազգային գրականութեան համար մեծ արժէք ունին՝ այլ ազգային երաժշտութեան համար գործնական օգուտ չեն բնծայեր։ արդէօր մեր ազգն ալ այսօր եթէ ոչ իւր Գողթման եղանակները՝ դնեն իւր ազգային երաժշտական ձայնին ու հնչիւնը մասամբ իւր կրցած է սրահել, ինչպէս որ պատահած են մեզի վիճակակից ազգերը, Յոյներ, Հրեայն, Պուլխարը, Աւստրալիացիներ, և այլք։

Պէտք է շարունակուի։

ԿՐՕՆԱԿԱՆՔ

ՍԵՄՈՒԷԼ ՌԱԲԲԻ ԵՒ ԻԻՐ ԳԻՐԳԸ

(Հարունակութիւն. տես թիւ 3.)

ԳԼՈՒԽ Ժ.

Քրիստոսի առաջին գալուստը։

Կը վախճամ, տեր իմ, որ Աստուած

Քրիստոսի երկու դարուստը յայտնի կը նշանակէ Աստուծոյ մարդաբանի բերնով Բ. դուրսը՝ ըսելով. «Արթնցիր, արթնցիր ու զօրութիւն հաղիւր վերագո՛ւ տիրոջ բազուկը»⁽¹⁾։ Այլու անգամ կը կրկնէ արթնցիր՝ անոր երկու դարուստը ցոյց տալով։ Աւանակաբար, այսինքն յատկապէս ու յայտնապէս Տ. և Ճ. Գ. դուրսներուն մէջ կը ցուցնէ Քրիստոսի առաջին գալուստը, այսինքն ինչ որ անոր շարժարանքներուն և արհամարհութիւններուն կը վերաբեւրին։ Աւելի տեսակաբար, այն է աւելի յատկապէս կը ցուցնէ՝ ըսելով. «Տեսանք զանիկայ որ չունէր եւրես, ոչ տեսիլ, և ոչ գեղեցկութիւն»⁽²⁾։ Անոր առաջին գալուստը իններորդ դարուն մէջ կը դնէ Ասայի՝ ըսելով. «մեզի մանուկ ծնաւ»։ և անմիջապէս կ'աւելորնէ անոր երկրորդ գալուստը ըսելով. «Աւելու խիստ ուժաւոր, հսկայ, հզօր. Վաւթի աթոռը նմաի որ հաստատէ զայն սկիզբէն մինչեւ ցաւիտան»⁽³⁾։ Աւ. Օսթարիս մարդաբան Թ. գլխուն մէջ կը ցուցնէ զանիկայ աղքատ ու իշոյ վերայ նրա տած. և ասով ուրիշ ինչ նշանակել կ'ուզէ մարդաբան, եթէ ոչ անոր առաջին գալուստը պիտի ըլլայ խոնարհ, իսկ երկրորդը՝ հզօր ու փառաւոր։ Այս պէս Վանիէլ մարդաբան ալ, է գլխայն մէջտեղուանքը կը ցուցնէ զանիկայ այսպէս ըսելով. «Կրտսնեի գիշերուան տեսիլքիս մէջ, և ահա երկնից ամպերուն վերայ՝ որդւոյ մարդոյ

(1) Զարթիր զարթիր Երուսաղէմ, և զգեցիր ըզզօրութիւն թաղի քո։ Եսայ. ԺԱ. 9։

(2) Տեսայք մեք զնա՛ և ոչ ոչոյ նորա տեսիլ և ոչ գեղեցկութիւն։ Եսայ. ԺԳ. 2։

(3) Եւ անուն կոչեցաւ նմա հրեշտակ մեծի խորհրդոյ։ Կրտսնիլ խորհրդակից. աստուած, հզօր, իշխան. հայր հանգերածելոյ աշխարհին։ Եւ Ես աւծից զփառազօրութիւն ի վերայ իշխանաց նորա և առողջութիւն նմա. մեծ է իշխանութիւն նորա և խաղաղութեան նորա չիք սահման։ Յովթան Վաւ.

նման կուգայր և մինչև հին աւուր
ցին քով հասաւ . և առին բերին զին
քը նորա առաջը , և տուաւ անոր իշ
խանութիւն , ու պատիւ ու թագաւ
ւորութիւն , և ամեն ժողովուրդները ,
ազգերն ու լեզուներ պաշտեն զանկից
և ծառայեն անոր ⁽¹⁾ ։

Եւ յայտնի է , Տէր իմ , որ Քրիս
տոս երկրորդ գալստեան ժամանակ հին
աւուրցին՝ այսինքն Լատուծոյ առաջը
նստելու է դատելու , ինչպէս որ ա
ռաջին գալստեանը մեր Հրեայ հարե
րուն առաջը նստաւ դատելու համար
Լհա Ղաւիթ մարգարէն Սեսիայի
այսինքն Քրիստոսի երկու գալուստն
այլ նշանակեց բերով . « Թէ կուգայ ,
և կուգայ անկից երկիրը դատելու » .
ՂԵ . 13 : Լաւջին գալստեան համար՝
որ պարզ գալուստ մի է , կուգայ կը
սէ , իսկ երկրորդին համար՝ որ զօրու
թեամբ մէկտեղ պիտի ըլլայ , կուգայ
երկիրը դատելու կըսէ : (Նոր երկրորդ
գալստեան համար Օսրբարիսս այլ կը
սէ ԺԴ գլուխը . « Ոտքերը՝ նշանները
նկարեն ձիթեանեաց լէրան վերայ ⁽²⁾ ։
Եւ մեր , Տէր իմ , կըսեմք թէ Լատ

թի նստցի , և զարգարութիւն նորա յայտնուի , և
զօրացուցէ զնա իրաւամբ և արդարութեամբ , յայ
տք՝ հետ և յաշխանան ժամանակաց : Եւայ . ԹԶ . 6 . 7 :

(1) Տեսնենք ի տեղեան գիշերայ և ահա ընդ ամ
պըս երկնից իբրեւ որդի մարդոց գոյր , և հասանէր
մինչև ի հին աւուրցի , և մատուցաւ առաջին նորա :
Եւ նմա տուաւ իշխանութիւն և պատիւ և արքա
յութիւն , և ամենայն ազգք և ուղիք և լեզուք նը
մա ծառայեցան , և իշխանութիւն նորա իշխանու
թիւն յաշխանական որ ոչ անցանէ , և թագաւո
րութիւն նորա ոչ եղծանիցի : Դաւ . Է . 15 . 14 :
Հոս բառին թարգմանիչը այն երկու անահամարե
լուն երրորդականին և վաւկատային և քանի մի ու
րիշ բնագոյն թարգմանութիւններն ալ մէջ կրբե
րէ , զարմոք զանց կընենք կրկնելու :

(2) Եւ կայցեն ոտք նորա յաւուր յայնմիկ ի վերայ
լէրինն ձիթեանաց՝ հանգեալ երեսաղէմի յարեւելից ,
և պատառեցի լեռան ձիթեանաց , կեսն նորա յա
րեւել , և կեսն նորա ի ծով , վիճ մեծ յոյժ , և խո
նարհեացի կես լէրինն առ հիւսիսի , և կես նորա առ
հարաւ : Դաւ . ԺԴ . 4 :

ուած Էութեամբն ու բնութեամբ
ոտք ու մարմին չունի , և ոչ ուրիշ մար
մնական իր մի . և ոտք ունենալը մար
մնաւոր ստեղծուածներու կը վայելէ :
Դարձեալ Ղաւիթ մարգարէն նորա
երկրորդ գալստեան համար խօսելով ,
ինչպէս վերն այլ բանք , կըսէ . « Նո
րա առաջը կրակ բորբոքի , և նորա բու
լոր տեղը բոցով սցրուի ⁽¹⁾ » : Իսկ մեր
չեմք բռնը՝ թէ Լատուած տեղ մի կը
պարագրի , և թէ անոր նման հզօր մի
կայ , որ նորա բոցորայքը կենայ , այլ
ասոր պէս վկայութիւնները ինչպէս որ
գրուած են , այն արդարը կը ճշմար
տեն , զոր մարգարէները կը ցուցնեն .
և այս վկայութիւնները երբեմն նորա
խոնարհութիւնը և երբեմն նորա մե
ծութիւնը ցոյց կուտան : Նորա հա
մար կըսէ Սաղարիս Գ գլուխը « Լհա
Տէրը կուգայ , և ո՛վ կարէ նորա գա
լլաւեան առաջը կենալ , վասն զի կը
բախի նման նա կը ձուլէ , և պիտի նը
տի արծաթն ու ոսկին ձուլելու ⁽²⁾ » :

Լհաւատիկ տես՝ թէ ինչ կերպով
պիտի գայ երկրորդ գալստեանը այն
արդարը որ դատեցին : Եւ տես , Տէր
իմ , թէ ինչ կերպով նոյն մարգարէն
նոյն Գ գլխոյն մէջ Սեսիայն կը ցուցնէ
բերով . « Լյն ատեն ևս պիտի գամ՝
ու մանեմ՝ դատաստանով անոնց մէջ ,
և ճշմարիտ վկայ պիտի ըլլամ՝ շնացող
և չար կանանց , երգում բնողներուն
և վարձկանաց վարձքը կորսողներուն ,
և որբերն ու այրիները կորսպտողնե
րուն , և օտարն ու աղքատը նեղողնե
րուն ⁽³⁾ » : Այնը կը գրէ , Տէր իմ , Եւ

(1) Հուր առաջին նորա բորբոքեցի , և չուրջ զնա
վաւ մրդիկ յոյժ : Սաղ . ԻԹ . 5 :

(2) Ահաւայելի գոյ տես տէր ամենակալ , և ո՛վ
ժառկայեցէ աւուր միո նորա , և ո՛ր հանգարտե
ցէ յայնտութեան նորա , զի նա մոցէ իբրեւ զոյց
հաղցի , և իբրեւ զածաւ բուսեաց : Եւ նոտցի սրբ
բեւ և ձուլել իբրեւ զարծաթ և իբրեւ զոսկի : Սաղ .
Գ . 2 . 3 :

(3) Եւ հաւոյ ի վերայ ձեր գատաստանու : և և .

զէ կիկէլ այլ, ԼԳ. գլուխը, ուր տեղ որ հասկնեքու և ոչխարներու համար կը խօսի. «Լէ դատեմ աննցմէ (1)», այսինքն սողսզներէն յանցաւորներն ու անհաւատները: Ո՛վ Տէր իմ, ահա այսպէս երկրորդ գաղտնետունը պիտի գտտէ անհաւատները արդարներուն մէջէն, ինչպէս որ Լ, զէ կիկա և Սաղաբիա յայտնադէս կ'ըսեն, (Սաղ. Գ. 18): Լ'նոր առաջին գաղտնետան ժամաւ նոսկ մերկններէն մէկը չճանչեց զինքը, վասն զի գերազանց է և մարդկային բնութեան բերներէն կ'անցնի, ինչպէս որ կը պատէ Լ'ստուած Լ'այեայտ մարգարէին բերնով ճ. Գ. գլխոյն մէջ. «Բնդ անօրէնս համարեցաւ, և վասն այսորիկ ոչ համարեցար զնա» (2): Լ'ը Լ'քեմիայն ժ. Ը. գլխոյն մէջ կ'ըսէ. «Լ'յա է մարգ, և ո՛վ կը ճանչէ զինքը (3)»: Լ' կը վախնամ, Տէր իմ, թէ մեր հայրերը Սեփալի առաջին գաղտնետունը անկէ հեռացան և մեղանչեցին, և մէք անոր համար այս անխախտան գերութեամբ մատնեցանք, սակայն ինչ որ այլ պատահի, Լ'ստուծոյ եմք՝ թէ որ անոր յուսալու ըլլամք:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԲՐԷՄԱՐԻ ԵՐԻՐԵՐ ԳԱՐԱՄԱՐ, յՐԴՈՒՄ ԶՐԴՈՒՄ
ԼԷՄԻՔ ԴԷԼԻԿԷՆ ԿԻՔԻ ԴԱՄԵ:

Լ'ը վախնամ Տէր իմ, չորայ այն արդար դատաւորն ըլլայ նա՝ որ իւր եր-

զէց վրայ արագ ի վերայ կոխարդաց և կանանց շնուցեայ, և ի վերայ այնպիսի որք երգնուցուն յանուն իմ ատու թեան, և որոց հատանիցեն զխորժա վարձկանի, և որ յաղթահարեն զայլոյս և կռիւն զորքս և խառնիցեն զերաւուն պանդխտին, և որ ոչ երկնիցին յինն, առ տէր ամենակող, Սաղ. Գ. 5:

(1) Երկէկէլ ԼԳ. գլուխը գրեթէ ծայրէ ի ծայր նոյն խմատը կ'ընծայէ:

(2) Եւ ընդ անօրէնս համարեցաւ, և նա զմեզ բողմայ վերացոյց և վասն անօրէնութեանց նոյս մատնեցաւ: Եսայ. ԺԳ. 12:

(3) Եւ մարգ է, և ո՛վ ճանչիցէ զնա: Երմ. ԺԷ. 9:

կրորդ գաղտնետունը հանդերձ զօրութեամբ պիտի դատէ, նա որ առաջին գաղտնէ՝ փրկիչ է բոլոր իրեն հաւատացողներուն, վասն զի Վաւիթ մարգարէն կ'ըսէ (Է. 2) «Յոց տուաւ իւր փրկութիւնը, ազգաց առջեւ յայտնեց իւր արդարութիւնը»: Լ'ը Լ'այլի ժ. Բ. գլուխը այսպէս կ'ըսէ. «Փրկչին ազգիւրներէն քաշեցէք ջուրը» (1): Լ'յս խօսքովս ալ ինչպէս որ ինձ կը թուի, մկրտութիւնը կ'իմացուի. որովհետեւ առջի գաղտնէ ջրով աղբեցոյց, երկրորդին՝ հրով պիտի դատէ: Լ'ը Յոր ժ. Թ. գլխոյն մէջ նոյն իւր Փրկչին համար կ'ըսէ, Տէր իմ, «Վիտեմ որ իմ Փրկիչս կենդանի է, և թէ՛ նոր օրը գալուն գեանէն յարութիւն պիտի առնում, և իմ մարմնովս աչքերս պիտի տեսնեն իմ ատու ուսածս» (2): Տէս, Տէր իմ, Յոր զինքը փրկիչ Լ'ստուած կը կոչէ, և յայտնի բան է որ մարմնոյն աչքերը չեն կրնար զԼ'ստուած տեսնել: Լ'ստուած գրեթէ յայտնի կը ցուցնեն մեզ թէ փրկիչ ըսածը այն արդար Լ'ստուածն է, որոց համար է խօսքը, որ միայն կրնայ ճշմարտապէս Լ'ստուած ըլլալ, որովհետեւ և ոչ մի մեղք գործեց, և ոչ նենգութիւն անոր բերնին մէջ գանուեցաւ (3): Ոչ Սովսէսի և ոչ ուրիշ մէկ մարգարէի համար ըսուեցաւ երբեք թէ փրկիչ է, արդար է, ու անմեղ: Արովհետեւ, ինչպէս գիտէք Տէր իմ, Սովսէս մեղք գործեց, և բոլոր մարգարէք նոյնպէս մեղանչեցին, վասն ո-

(1) Եւ առէք ջուր յազգիւրացն փրկութեան. Եսայ. Ժ. 5:

(2) Գանդի գիտեմ զի մշտնջենաօր է որ լուծաւ ներքեւ է զիս յերկրի յարուցանել զմերթ իմ որ կը բնաց զոյս ամենայն: Ի տեսանէ փնտրեցաւ ինձ այս զոր ևս անձին խնամ իրողէս և մ', զոր անին իմ Էսեա և ոչ այլ օր: Յո՛ւ. Ժ. Թ. 22:

(3) Զի անօրէնութիւն ինչ ոչ գործեաց, և ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա: Ես. ԺԳ. 9:

րոյ դիրք անոնցմէ և ոչ մին արդար
կ'անուանէ , այլ այս անունը միայն ի
բնէն համար պահէց : Արկապու թիւն
չկայ որ ուրիշները չսկիտի փրկուին ,
այլ անոնք միայն՝ որ նորա առջի դա-
լուստը կը հաւատան : և չհաւատա-
ցողները պատճառ մի չունին , որ այն
սրտաճառաւ երկրորդ գարտեանը զա-
նոնք ալ փրկէ , այլ արժանի են մահ-
ուան : Բայ որով անոնք որ Սովետին՝
որ մեղսւոր անձն մի էր , չհաւատա-
ցողներն ու մոտիկ չընողները մահաւան
արժանի եղան , որչափ աւելի կրակի
մէջ այրելոյ արժանի են անոնք որ չեն
հաւատար ու կը հայհոյեն նոյն արդա-
րը , որ բնաւ մեղք մի չգործեց . սա-
կայն ինչ որ այլ պատահի , մեք Ա-
սուծոյ եմք :

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ Ք

Մայիս 13 ին Ահաբիաու Արտիւ-
Լիզիկ Կայսեր գահակալութեան տա-
րեգործին շնորհաւորութեան համար
լոռ սովորութեան թէ՛ Մենապատիւ
Պատրիարքութեան և թէ՛ Մեծապատիւ
Հիւղատուք փութաղին երթալ Ասե-
մախայլ Առաւմարջին պալատը : Աորին
փեմութիւնը արտաքոյ կարգի կերպիւ-
րնդունեց իւրաքանչիւր այցելուքը .
պալատին դրսի դին երեք կարգ ար-
քունի զինուորաց կը սարսէին ի պա-
տիւ այցելուաց , և զինուորական երա-
ժիշտք քաղըր եղանակներ կը դաշնա-
կէին : Իսկ ինքը Ասեմախայլ Արտի-
փաշայն իւր պատուոյ համադգեստը
հագած՝ այնպէս կը դիմաւորէր իւր
մեծատիւն հիւրերուն : Այն դիշե-
րուան ճրագափառութեան հանդէսը
նշանաւոր եղաւ ինչպէս միշտ՝ նոյն-
պէս և այս անգամ՝ սուրբ Յակոբոյ
մեծ վանքին առջեւ : Արան վերայ

դրուած էր Ահաբիաու Կայսեր լու-
սանկար մեծ պատկերը զարդարուն
չըմանակաւ . նոյնպէս և մեծ դուռը
զարդարուած էր բաղմաթիւ կանթեղ-
ներով և ծաղիկներով : Բաղմութիւնը
ամեն ազգէն կը խռնէին երաժշտաց
ունկնդրութեանը : Ասեմախայլ Փա-
շայն մէկ ժամու չափ նստելով Ամե-
նապատիւ Սրբազան Հօր քովը՝ իւր
ներկայութեամբ բարեհաճեցաւ պա-
տուել զսուրբ Աթուս և զհանդէսը :

— Սրբուհւոյ Կայիանէի տօնին օ-
րը սովորութիւն է քաղաքիս օրիորդաց
վարժարանին մէջ թէ՛ ուսման և թէ՛
առջնեգործութեան մասնաւոր հան-
դէս մի ներկայացընել : Այս անգամ
եւս սոյն հանդէսը տեղի ունեցաւ , և
բոլոր քաղաքացի հանդիսակոնք մեծ
գոհութեամբ տեսան իրենց աղջկանոց
բանած տեսակ անտակ առջնեգործա-
կան արդիւնքները , որու սկզբնաւ-
րութիւնը հաղիւ չորս ամիս կայ : Ահ-
ծապատիւ Արարէթ աղայն Ս. Գու-
փամաճեան , որ միաբանութեան կող-
մէն հրաւիրուած էր ի հանդէսն , բա-
րեհաճեցաւ Չ օտմանեան լիքա վար-
ժատան նուիրել այն նստատեղաւ , որ
առջնեգործական արդեանց վիճակա-
հանութեան ժամանակ (որ սկիտի ըլ-
լոյ ուխտաւորաց առեւնը ,) իրեն ա-
նունը եթէ ելնելու ըլլայ , կրկին վար-
ժատան նուիրուի : Բայ ի սմանէ յիշ-
եալ ազգասէր աղայն երկու օրինակ ալ
Աիօն ամաթիւրթիւն նուէր կը մատու-
ցանէ յանուն իւր՝ Օկթուանի դպրու-
սանոց :

Անգղիոյ տէրութեան մէջ և ըստ
մեծի մասին Ռալանտայի մասին մէջ
հռոմէական եկեղեցի և բաղմութիւ
ժողովուրդ գանուիլը դիտեմք , որոնք
Հռոմայու աթուոյն անձնանուէր ու-
ղերմ հարստակներ են կրօնիւք , սա-